«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2019Թ. ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ՆԻՍՏԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ) հոգաբարձուների խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ.Սեւակ փ., 4 հասցեում, ՇՊՀ շենքում:

Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի 24 (քսանչորս) անդամից 17-ը (տասնյոթը).

1. Կարեն Սարուխանյան, ՀՀ ԱԺ պատգամավոր
2. Լեւոն Բարսեղյան, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի տնօրեն
3. Սուրեն Մանուկյան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի» Համեմատական ցեղասպանագիտության բաժնի վարիչ
4. Գայանե Շագոյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող:
5. Կարեն Ավագյան, Գյումրու ավիամոդելային խմբակի ղեկավար
6. Սեյրան Մարտիրոսյան, «Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ի Շիրակի մասնաճյուղի ղեկավար
7. Խաչատուր Իսրայելյան, ՇՊՀ գործարարության եւ վարչարարության ամբիոնի դասախոս
8. Նաշիկ Հարությունյան, ՇՊՀ մաթեմատիկայի, ֆիզիկայի եւ SS ամբիոնի դոցենտ
9. Էվելինա Մաթեւոսյան, ՇՊՀ ռուսաց լեզվի եւ գրականության ամբիոնի դոցենտ
10. Արտուշ Խաչատրյան, ՇՊՀ ֆիզիկական դաստիարակության, տեսության եւ մեթոդիկայի ամբիոնի դասախոս:
11. Գրիգոր Բարսեղյան, ՇՊՀ ֆիզիկական դաստիարակության, տեսության եւ մեթոդիկայի ամբիոնի դասախոս
12. Աիդա Գարեգինյան, ՇՊՀ ռուսաց լեզվի եւ գրականության ամբիոնի դոցենտ
13. Օվսաննա Թերզիբաշյան, ՇՊՀ մանկավարժության ֆակուլտետի մանկավարժություն եւ մեթոդիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
14. Ռիմա Խաչատրյան, ՇՊՀ հումանիտար գիտությունների եւ արվեստի ֆակուլտետի հայոց լեզու եւ գրականություն բաժնի 4-րդ կուսի ուսանողուհի
15. Մառա Հարությունյան, ՇՊՀ սոցիալական գիտություններիեւ իրավունքի ֆակուլտետի եւ հոգեբանության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի:
16. Ռիմա Պողոսյան, ՇՊՀ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կառավարում բաժնի 2-ին կուրսի ուսանողուհի:
17. Անուշավան Սարգսյան, ՇՊՀ ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության բաժնի 4-րդ կուրսի ուսանող:

Բացակայում էին.

18. Սվետլանա Հովհաննիսյան, ՇՊՀ հումանիտար գիտությունների եւ արվեստի ֆակուլտատի ռուսաց լեզվի եւ գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

19. Գեւորգ Պետրոսյան, «Բիոսֆերա » ՀԿ ղեկավար

20. Ամալյա Ենգոյան, ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱԺ հետ կապերի վարչության պետ:

21. Հայկակ Արշամյան, Համահայկական Հիմնադրամի նախագահ:

22. Ռոբերտ Սուքիասյան, ՀՀ ԿԳՆ աշխատակազմի բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ

23. Լուսինե Առաքելյան, Կրթության եւ գիտության նախարարի տեղակալ

24. . Սոֆյա Հովսեփյան, ՀՀ ԱԺ պատգամավոր

Շիրակի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահը ներկայացրեց, որ Հոգաբարձուների խորհրդի նիստի մասին հոգաբարձուները պատշաճ իրազեկվել են ՇՊՀ կանոնադրությանն համապատասխան: Այնուհետեւ ներկայացրեց, որ տվյալ պահին առկա է քվորում, 16 հոգաբարձու եւ բացեց նիստը:

Ներկայցվեց, որ օրակարգում ՇՊՀ ռեկտորի ԺՊ Սերոբյանի խնդրանքով հանվել էր առաջին կետը, քանի որ նա առաջարկություններն հետ է վերցրել եւ հավանաբար կվերադառնա օրակարգ հաջորդ նիստերից մեկում: Այնուհետեւ ներկայացվեց օրակարգի նոր նախագիծը:

**Օրակարգի նախագիծ.**

1. ՇՊՀ 2018 թ. բյուջեի հաշվետվության հաստատում: (ՇՊՀ ՀԽ-ն ի գիտություն էր ընդունել հաշվետվությունը, խնդրել էր բացվածքները ուսումնասիրման: Բացվածքն էլեկտրոնային եղանակով ուղարկվել էր հոգաբարձուներին)
2. ՇՊՀ ՀԽ-ին ուղղված դիմումների քննարկում.
   2.1. Պատմության եւ փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հ. Խորիկյանի դիմումի ուսումնասիրությունը . դիմումն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հոգաբարձուներին:
   2.2. ՇՊՀ Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի դիմումի ուսումնասիրությունը. դիմումն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հոգաբարձուներին:
3. Այլ հարցեր:
   3.1. ՀԽ նախագահի եւ անդամների ու ՇՊՀ դոկտորների եւ գիտական խորհրդի հետ հանդիպումների մասին
   3.2. Աուդիտի մասին վերապահումների վերաբերյալ
   3.3. Ակադեմիական վարժարանի տնօրենի դիմումի մասին
   3.4. Դասախոս Վ.Աբրահամյանի դիմումի լուծումը եւ ինչ է արվել քննությունների կազմակերպման մասով:

**Լսեցին**

ՀԽ Նախագահը ներկայացրեց քննարկվելիք փաստաթղթերը եւ խնդրեց օրակարգի վերաբերյալ լրացումներ եւ առաջարկություններ ներկայացնել, եթե այդպիսիք կան:

Ս.Մարտիրոսյանը խնդրեց ներառել կետեր կապված ուսխորհրդից հոգաբարձուների խորհուրդ պատվիրակելու խնդրի հետ կապված: Ներկայացվեց նամակ-դիմում:

Հոգեբանության, սոցիոլոգիայի եւ սոցիալական աշխատանքի ամբիոնի մի խումբ դասախոսների դիմումը ռեկտորի ԺՊ–ին (Դիմումն ուղարկվել էր հոգաբարձու Մարտիրոսյանին 03. 05. 2019թ, նշված, որ ուղարկվելու է նաեւ Սերոբյանին, բայց Սերոբյանը չէր ստացել): Բարսեղյանը ճշտեց, թե դա ինչ նամակ է: Մարտիրոսյանը ներկայացրեց, որ ինքն ստացել է, իսկ գրված է, որ կրկնօրինակը ուղարկվել է ռեկտորի ԺՊ-ին:

Բարսեղյանը խնդրեց բազմացնել նամակը, իսկ Մարտիրոսյանին խնդրեց օրակարգի 4-րդ կետի համապատասխան ենթակետը քննարկելիս ներկայացնել նամակը:

Գ.Շագոյանը անդրադարձավ ռեկտորի ընտրության ընթացակարգի քննարկմանը: Ներկայացրեց իր մոտեցումները:

Լ.Բարսեղյանը ներկայացրեց, որ ՇՊՀ գիտությունների դոկտորների եւ գիտական խորհրդի հետ հանդիպումներում առաջարկվել է առաջարկություններ ներկայացնել ռեկտորի ընտրության կարգի եւ թեկնածուներին ներկայացվող պահանջների մասին, եւ, եթե կարիք կա՝ ներառել որպես կետ քննարկումների: Եղել է երկու գրավոր արձագանք էլեկտրոնային նամակագրությամբ, մեկը Ս.Հովսեփյանի, մյուսը Գ.Շագոյանի կողմից:
Ներկայացվեց օրակարգի նախագծի վերջնական տարբերակը:

**Օրակարգի նախագիծ.**

1. ՇՊՀ 2018 թ. բյուջեի հաշվետվության հաստատում: (ՇՊՀ ՀԽ-ն ի գիտություն էր ընդունել հաշվետվությունը, խնդրել էր բացվածքները ուսումնասիրման: Բացվածքն էլեկտրոնային եղանակով ուղարկվել էր հոգաբարձուներին)
2. ՇՊՀ ՀԽ-ին ուղղված դիմումների քննարկում:
2.1. Պատմության եւ փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հ.Խորիկյանի դիմումի ուսումնասիրությունը . դիմումն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հոգաբարձուներին:
2.2. ՇՊՀ Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի դիմումի ուսումնասիրությունը. դիմումն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հոգաբարձուներին:

3. Այլ հարցեր:
3.1. ՀԽ նախագահի եւ անդամների ու ՇՊՀ դոկտորների եւ գիտական խորհրդի հետ հանդիպումների մասին
3.2. Աուդիտի մասին վերապահումների վերաբերյալ
3.3. Ակադեմիական վարժարանի տնօրենի դիմումի մասին
3.4. Դասախոս Վ.Աբրահամյանի դիմումի լուծումը եւ ինչ է արվել քննությունների կազմակերպման մասով:
3.5. Ուսանողական խորհրդից ՇՊՀ ՀԽ կազմում հոգաբարձուների պատվիրակման մասին
3.6. Հոգեբանության, սոցիոլոգիայի եւ սոցիալական աշխատանքի ամբիոնի մի խումբ դասախոսների դիմումը ռեկտորի ԺՊ–ին (Դիմումն ուղարկվել էր հոգաբարձու Մարտիրոսյանին, նշված, որ ուղարկվելու է նաեւ Սերոբյանին, բայց Սերոբյանը չէր ստացել)
3.7 Ռեկտորի ընտրության մեխանիզմների վերանայման հարցը:

Օրակարգը դրվեց քվեարկության:
Կողմ՝ 16, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Օրակարգի առաջին հարց

1.ՇՊՀ 2018 թ. բյուջեի հաշվետվության հաստատում:
Լսեցին. Քալաշյանը ներկայացրեց, որ բացվածքում ներառվել է լրացում: Խրախուսման եւ դրամական աջակցության ծախսեր կետում ավելացել է 2 մլն 319000 ՀՀ դրամ: 57347 հզ դրամը եղել է 55028 հզ դրամ: Ավելացել է նաեւ քաղաքացիաիրավական պայմանագրերով այլ ծախսերի մեջ 37. 529 հզ դրամ: Դրամաշնորհային եկամուտներից տարբերություն կար՝ 93 մլն գրված, որը նոր բացվածքում 96 միլիոն է, որը եղել է թվաբանական սխալի հետեւանք, քանի որ բանաձեւ չկար ծրագրում այն հավանական էր: Բանկի տարանցիկ հաշիվներից գումարների վերադարձ տողում 1607 հզ-ի փոխարեն պետք է լիներ 1670 հզ դրամ, որը եւս տեխնիկական վրիպակ է: Լ.Բարսեղյանը տեխնիկական վրիպակների վերաբերյալ հարց չուներ, բայց ավելացված գումարների վերաբերյալ խնդրեց ճշտել, թե ինչու են եղել բացթողումները: Քալաշյանը նշեց, որ հավանաբար ՀԾ-ի հետ կապված խնդիր կար, որը շտկել նայելուց հետո ինքը նպատակահարմար է գտել նորից թվերն ստուգել: Լ.Բարսեղյանն հարցրեց, թե կարիք կա՞ մասնագետների վերապատրաստման: Լ.Բարսեղյանը ամփոփեց, որ տեխնիկական մասով բացատրությունները պարզ են: Եթե կան բովանադկային հարցեր, խնդրեց ներկայացնել:

Գ.Շագոյանը խնդրեց ներկայացնել պարզաբանում պարգեւավճարների եւ պարգեւավճարների տողում 2.913.000 դրամի վերաբերյալ: ՇՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Ե.Սերոբյանը նշեց, որ պարգեւավճարները բոլորին տրվել է համաչափ: Իսկ 2.913.000-ը պաշտպանության նախարարության կողմից փոխանցված գումարներ են: Նաեւ պարգեւատրվել են շաբաթ օրերն աշխատած եւ պետական քննություններում ներգրավված անձանց: Առաջարկությունը ներկայացնում է ստորաբաժանման ղեկավարը, որոշումն ընդունում է ռեկտորի ԺՊ-ն:

Կ.Ավագյանն հարցրեց, թե ինչու է ուսումնական պրակտիկայի համար նախատեսված 4150 հզ դրամից 1 մլն-ով թերակատարվել: Ու՞մ հետ է պայմանագրեր կնքվել եւ չեն կատարվել, կամ ում հետ են անվճար պայմանագրեր կնքվել: Պրակտիկայի թերացում կա՞, թե՞ ոչ:

Ե.Սերոբյանն ասաց, որ կան ուսանողներ, որոնք հեռավոր գյուղերից են կամ երեխաներ ունեն, նրանք բերել են պահանջագրեր իրենց գյուղի դպրոցից կամ այլ մոտ վայրերից, եւ պրակտիկան կազմակերպվել է այդ պահանջագրերի հիման վրա: Պրակտիկայի գործընթացում թերացում չկա:

Է.Մաթեւոյանը նշեց, որ օրինակ, անգլերենի եւ ռուսերենի պահանջարկ չլինելու պատճառով ուսանողների մի մասն անցել է պրակտիկան բուհ-ում, կատարել են թարգմանություններ եւ այլ աշխատանքներ:

Լ.Բարսեղյանն հետաքրքրվեց, թե որտեղ են անցնում պրակտիկան ուսանողները: Քալաշյանը եւ Սերոբյանը պատասխանեցին, որ հիմնականում ՊՈԱԿ-ներ են, բանկերի մասնաճյուղեր, փաստաբանական գրասենյակներ: Վերջերս նման պայմանագիր կնքվել է նաեւ մարզպետարանի հետ:

Ս.Մարտիրոսյանը հարցրեց, թե տպագրական ծախսերն ինչ են ներառում եւ հնարավոր չէ՞ տպագրությունից եկամուտներ ստանալ: Սերոբյանը նշեց, որ տպարան չունեն եւ վճարում են: Տպագրական ծախսերը ներառում են դիպլոմների, բուկլետների, գիտական հանդեսներ եւ ժողովածուներ: Մարտիրոսյանը նշեց, որ իրավագիտության պրակտիկայի հետ կապված ինչ խնդիրներ կան, իրավագիտության լիցենզիայի հետ կապված ինչ խնդիրներ կան, ինչու չի հաստատվել: Սերոբյանը, որ պրակտիկայի հետ կապված խնդիրներ չկան, իսկ լիցենզիայի համար ստացել են երկու մերժում, որը կապված է նյութատեխնիկական ապահովման անբավարար լինելու հետ:

Լ.Բարսեղյանը նշեց, որ ինքը այս հարցով պարտավոր է պարզաբանում տալ: Ինքը տեսել է այդ մերժումները, երկուսի մեջ էլ նշված է տարածքային պայմանների անբավարար լինելը եւ երկու հայտի մեջ էլ նույն տարածքային պայմաններն են ներկայացված: Առաջին հայտը մերժվել է նույն պատճառով, հետո սակայն, նույն պայմաններով նոր հայտն է ուղարկվել: Հարց է առաջանում, թե ինչու է ուղարկվել նույն պայմաններով երկրորդ հայտը՝ նույն մակերեսով: Ինչո՞ւ չեն կատարվել լրացումներ եւ փոփոխություններ: Ուղիղ կապ չունի բյուջեի հետ, բայց կարեւոր հարց է: Գ.Շագոյանը նշեց, որ ուսանողների թվից է կախված: Լ.Բարսեղյանը նշեց, որ երկրորդ հայտում որոշ կետեր ուղղվել են ըստ դիտողությունների, բայց այդ մակերեսի հարցը պետք է լուծվեր:

Ա.Գարեգինյանը հարցրեց «երկարամյա ծառայության նպաստ» տողի վերաբերյալ: Խոսքը 1.120.000 դրամին էր վերաբերում: Ե.Սերոբյանը պատասխանեց, որ զորացրվել է ռազմական ամբիոնի դասախոս, որին դատարանի որոշմամբ բուհը պետք է տար երկարամյա ծառայության նպաստ: Բուհի ղեկավարությունը սկզբում կարծել է, որ այդ նպաստը պետք է ՊՆ-ն տա, բայց դատարանն այլ բան է որոշել:

Կ.Ավագյանը հարցրեց, որ ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերից խնայվել է 14 մլն դրամ, բայց ընդհարվեցինք մի իրավիճակի, երբ բուհի ստուդիան չկարողացավ ուղիղ եթեր ապահովել ընդամենը 40 հազար դրամանոց կոդեր կոչվող սարքի բացակայության պատճառով եւ ստիպված վճարեց այլ կազմակերպության: Ստուդիայի սարքավորումներն էլ բավականին հին են: Սերոբյանը ասաց, որ խնայողությունների շնորհիվ հնարավոր է եղել կայունացնել բուհի վիճակը եւ հաշվի կառնվի դիտողությունը:

Կ.Սարուխանյանը հարցրեց, թե 18 կետում ինչ քաղիրավական պայմանագրերով ծառայություններ են: Քալաշյանը պատասխանեց, որ հրավիրյալ դասախոսների հետ կապված ծախսերն են, բուֆետի աշխատողների հետ կնքված պայմանագրերն են, որոշակի այլ աշխատանքների համար, պատճենահանման ծառայության համար կա քաղիրավական պայմանագիր: Սերոբյանը նշեց, որ ունեն քաղիրավական պայմանագրով աշխատողներ:

Գ.Բարսեղյանը հարցրեց, թե մեկ տարի առաջ բուհի ֆինանսական վիճակը Սերոբյանը շատ ծանր էր ներկայացրել, անցել է 10 ամիս, եւ այժմ կարծես կայունացել է վիճակը: Խնդրեց մանրամասնել՝ ինչ կարող է ավելացնել Սերոբյանը բուհի վիճակի վերաբերյալ: Սերոբյանը նշեց. որ խնայողությունների մեխանիզմներ են կիրառվել, ավտոբուսի հետ կապված կարգավորվեց գազալցման պրոցեսը, այլեւ չի վարձվում ավտոբուս, գնումների գործընթացի հետ կապված են կարգավորումներ եղել: Վարկի թույլտվությունը չի օգտագործվել, խնայողության ռեժիմի շնորհիվ: Վարկը պետք էր կայունացման ֆոնդի համար: Ինքը դեմ է եղել նաեւ պարգեւավճար տալուն, եւ եթե այդ խոսակցականում 13-րդ աշխատավարձ կոչվող պարգեւավճարների մի քանի տասնյակ միլիոն դրամը բավականին կլիներ կայունացման ֆոնդ ձեւավորելու համար: Դժվար են ընթանում չվճարված, ուշացված ուսման վարձեր գանձելու պրոցեսը, երբ մարդիկ դիպլոմն ստացել գնացել են, բայց փաստաթղթային հիմքը բավարար չէ, կամ պայմանագրերը չկան: Հետո շատ տարօրինակ կերպով մեկ դատավոր բավարարում է նման հայցերի քննելու պահանջները, մյուսը մերժում:

Լ.Բարսեղյանն հարցրեց, թե եթե չկան պայմանագրեր, ինչպես են հաշվարկվել այդ պարտքերը, եթե կան՝ ուր են: Այդ ամենը քրեական գործերի պետք վերածվեն: Սերոբյանը նշեց, որ բուհին վերաբերող քրեական գործերով անցնում են նաեւ նման հարցեր:

Սուրեն Մանուկյանը հարցրեց, թե ինչու համալսարանը գումարներ չի վաստակում, ընդամենը այլ եկամուտներում միայն բուֆետն է նշված, որն էլ թերակատարում ունի եկամտային մասի: ՊՈԱԿ-ից հիմնադրամի անցումն հենց ենթադրում է եկամտաբեր գործնեության հնարավորությունների օգտագործում, ինտելեկտուալ ռեսուրսը օգտագործելով, բայց համալսարանի զարգացման տեսակետից պետք է ոչ միայն խնայել: Ինչ ծրագրեր կան հետագայի համար:

Սերոբյանը նշեց, որ հիմնադրամը սեփական գույք չունի, կարծում է, որ լուրջ եկամուտներ կբերեն ոչ թե ձեռնարկատիրական գործնեությունը, այլ որոշոկի ծրագրերի մասնակցությունը: Բուֆետը աշխատել է տարվա կեսից եւ բուֆետի գծով անցած տարվա առաջին կեսի վնասներն են արտացոլված նաեւ:

Ս.Մանուկյանը հարցրեց, որ եթե հյուրանոցը չի աշխատում, ինչու է 5 միլիոնի գույք գնվել հյուրանոցի համար: Սերոբյանը պատասխանեց, որ մի քանի տուրիստական ընկերությունների հետ բանակցություններ են վարվում, ուղղակի եկամուտը բուհին թողնելու հարցն է, որը նախարարության հետ պետք է կարգավորվի:

Է.Մաթեւոսյանը հարցրեց, թե թարգմանչական գործնեության համար եւ՞ս պետք է թույլտվություններ ստանան: Ինչպե՞ս է օգտագործվում դահլիճը: Սերոբյանը պատասխանեց, որ դահլիճը վարձով տալու դեպքում վարձը փոխանցվելու է պետական այլ մարմնի, բուհին չի մնում:

Է.Մաթեւոսյանն ասաց, որ գիտխորհրդի կողմից երաշխավորված ձեռնարկներն անգամ դասախոսներն իրենց հաշվին են տպագրում: Հնարավոր չէ՞ բուհի գրախանութ բացել եւ այդ գրքերի վաճառքից եկամուտ ստանալ:

Կ.Ավագյանն հարցրեց, թե բուհին սպասարկող բանկերը որոնք են եւ, որոնք են տալիս հաշվի մնացորդի համար տոկոսավճար: Կան բանկեր, որոնք տալիս են: Քալաջյանը պատասխանեց որ ՇՊՀ-ն սպասարկող բանկերը չեն տալիս տոկոսավճար մնացորդի վրա:

Լ.Բարսեղյանն ամփոփեց.ր վարձով տարածք տալը ամենավերջին բանն է եկամուտներ ստանալու տեսակետից, կարելի է 2-4 մարդուց բաղկացած փոքր ձեռնարկություններ ունենալ, տուրիստական գործակալություն ունենալ, հյուրատանը պետք ասեղ գցելու տեղ չլիներ եւ խնդրում, հորդորում է հույսը չդնել միայն ուսման վարձերի ու բյուջեից ստացվող գումարների վրա: Տեխնիկական վերազինման հետ կապված ասաց, որ հիշում է վերջին մրցույթում հեռարձակումը խնդիրների էր բախվել ու վերջին պահին դիմեցին այլ ընկերության: Իսկապես հարկավոր է, որ գույքագրում լինի, եւ եթե կա տեխնիկական վերազինման անհրաժեշտություն, ապա ողջամտության սահմաններում կատարվեն գնումներ, այլ ընկերությունների վճարելու փոխարեն: Տպագրության հետ կապված: 2018-ին 8000 դոլարին մոտ պատվեր է եղել: Եթե հնարավոր է փոքր տպագրատուն բացել, ապա պետք է բացվի, ուղղակի պետք է պատշաճ ուսումնասիրվի՝ տպագրատու՞նն է ձեռնտու, թե պատվիրելը: Բուֆետի հետ կապված առաջարկվեց ներկայացնել վերջին 8 ամսվա վերաբերյալ համառոտ հաշվետվություն:

Քալաջյանը նշեց, որ եկամուտների եւ ծախսերի կենտրոն է համարվել:

Օրենսդրական դաշտի անբավարար լինելը բիզնես բաղադրիչի հետ կպված Բարսեղյանն ասաց, որ կարելի է քննարկել նախարարության հետ, տեղում եւս կարող են աշխատել, վերլուծել: Բարսեղյանն ամփոփեց, ասելով, որ բյուջեի բացվածքը ներկայացվեց, քննարկվեց: Առաջարկեց ի գիտություն ընդունված բյուջեի կատարողականն հաստատել եւ գնահատել բավարար:

Որոշեցին. Հաստատել Շիրակի պետական համալսարան հիմնադրամի 2018 թվականի բյուջեի նախահաշվի կատարողականը եւ գնահատել բավարար:

Քվեարկեցին.
Կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0
Որոշումն ընդունվեց:

2. ՇՊՀ ՀԽ-ին ուղղված դիմումների քննարկում.

2.1
Լսեցին: Քանի որ Խորիկյանը բացակայում էր այդ պահին, Բարսեղյանն առաջարկեց քննարկել 2-րդ կետի երկրորդ հարցը, մինչեւ Խորիկյանը կգար:

2.2. ՇՊՀ Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի դիմումի ուսումնասիրությունը. դիմումն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հոգաբարձուներին:

Լսեցին.
Լ.Բարսեղյանը ներկայացրեց ՇՊՀ կազմում գործող ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի դիմումը հոգաբարձուների խորհրդին: Նշեց, որ հարցը այն է նաեւ, թե վերաբերելի՞ է արդյոք դիմումը հոգաբարձուների խորհրդին եւ նրա լիազորությունների շրջանակներո՞ւմ է դրան լուծում տալը, թե՞ ոչ: Նախագահը հրավիրեց դպրոցի տնօրենին ներկայացնելու դիմումը եւ պաշտպանելու այնտեղ գրվածը:

ՇՊՀ ավագն դպրոցի տնօրեն Կ.Դարբինյանը ներկայացրեց, որ ռեկտորի ԺՊ Սերոբյանը հանդիպում է անցկացրել ավագ դպրոցի ուսուցիչների հետ, ներկայացրել ժամաքանակները, եւ հարց է բարձրացրել կրթության որակի հետ կապված: Այնուհետեւ տարբերակ է ներկայացրել, որ տեստավորման համակարգով ուսուցիչներ ընտրելով կարելի է բարձրացնել դասավանդման որակը: Կոլեկտիվի մի մասն սկզբից համաձայնել է, բայց հետո մանկխորհրդի արտահերթ նիստում 54 մանկավարժներ որոշեցին չհամաձայնել առաջարկին, կապված նրա հետ, որ կրթության նախարարությունն է իրավասու զբաղվելու որակավորման հարցերով: Ինչպես նաեւ նման մոտեցման դեպքում կասկածի տակ է դրվում ուսուցիչների կրթությունը, որոնց մեծ մասը կրթվել է հենց ՇՊՀ-ում:

Խոսք խնդրեց ավագ դպրոցի աշխատակից Արմեն Մելքոնյանը: Լ.Բարսեղյանը Դարբինյանի խոսքի ավարտից հետո խոստացավ խոսք տալ, եթե Դարբինյանը համարի, որ էական լրացում կարող է անել Մելքոնյանը:

Դարբինյանը առաջարկեց լսել Ա.Մելքոնյանին: Ա.Մելքոնյանը նշեց, որ Սերոբյանի հետ հանդիպման ժամանակ խոսք գնացել է նաեւ պայմանագրերի մասին: Այդ պայմանագրերը կնքվում են ամեն տարի եւ գործող պայմանագրերի ժամկետն ավարտվում է 2019 թվականի օգոստոսին: Իսկ դա ավագ դպրոցի մանկավարժներն, ըստ Ա.Մելքոնյանի, դա խնդիր են համարում: Իսկ տեստավորման միջոցով որակի բարձրացումը սխալ մոտեցում են համարում: Իսկ օրենսդրական տեսակետից վկայակոչեց կանոնադրությունը, որ դա հոգաբարձուների խորհրդի լիազորություններում է: Իսկ հանրակրթության մասին օրենքով բուհի ղեկավարությունն իրավասու չէ անցկացնել ատեստավորում, անկախ բուհի ներքին կանոնադրական ակտերից: Պայմանագրերի ամեն տարի վերակնքումը եւս խնդիր է:

Խոսք վերցրեց ավագ դպրոցի փոխտնօրեն Դավինյանը: Դավինյանն նշեց, որ նամակում, ժամանակի սղության հետ կապված, սպրդել են անթույլատրելի ձեւակերպումներ:

Լ.Բարսեղյանն հարցրեց, թե կա՞ն վերապահումներ տեքստի հետ կապված: Դավինյանը նշեց՝ այո: Մանկավարժական խորհրդի արձանագրության մեջ էլ է նշված, որ որոշ ձեւակերպումների հետ համաձայն չեն մանկավարժները, բայց ժամանակի սղության պատճառով նամակն այդ տեքստով է ուղարկվել: Լ.Բարսեղյանի ճշտող հարցին պատասխանեց, թե որոշ ձեւակերպումների վերաբերյալ բոլոր 54 ստորագրող աշխատակիցները վերապահումներ ունեն: Մասնավորապես՝ «պաշտոնական դիրքի չարաշահում», «ռեկտորի ԺՊ-ի ապօրինությունները» ձեւակերպումներն անընդունելի են:

Տնօրենը լրացրեց. որ ձեւակերպումները ժամանակի սղության պատճառով չեն վերախմբագրել:
Լ.Բարսեղյանը լրացրեց որ նամակն անստորագիր է թեպետ դրաշմակնքված է, խնդրեց կողմնորոշվել դպրոցի տնօրենին եւ մյուս ներկայացուցիչներին՝ ճշտել, նամակը քննարկվի՞, թե նամակի փոխարեն քննարկվի բանավոր դիմումը, որի հետ բոլորն համաձայն են: Եթե կա մեկը, որին տեքստը լիովին բավարարում է, կամ տեր է կանգնում այդ դիմումին, կքննարկվի տեքստը: Դպրոցի տնօրենը հայտարարեց, որ նամակը պետք է կողքի դրվի եւ քննարկվի բանավոր դիմումը:

ՀԽ նախագահը հայտարարեց որ այդ նամակը առոչինչ է, խնդրեց, որ նամակը չքննարկելու այս իրադրության մասին տնօրենը տեղեկացնի մանկավարժական կոլեկտիվի յուրաքանչյուր աշխատակցի, բացատրվի, որ ՇՊՀ Հոգաբարձուների խորհրդին թյուրիմացաբար կամ այլ պատճառներով ներկայացվել է դիմում, որը ստացած չի եղել մանկավարժական խորհրդի համաձայնությունը: Լ.Բարսեղյանը այնուհետեւ դիմելով ՀԽ անդամներին, պնդեց՝ առոչինչ համարել այդ փաստաթուղթը, եւ անցնել բանավոր դիմումի քննարկմանը:

Այնուհետեւ ներկայացրեց բանավոր բողոքի բովանդակությունը, դիմելով Դարբինյանին, խնդրելով ուղղել, եթե սխալ է հասկացել.-ուրեմն դպրոցի մանկավարժական խորհուրդը դիմում է ՀԽ-ին, համարելով, որ Սերոբյանի ներկայացրած ատեստացիայի գաղափարը, որակի բարձրացման նկատառումներով, համարում են տեստավորում, դա համարում են սխալ մոտեցում եւ դիմում են ՀԽ-ին, հիմնվելով ՇՊՀ կանոնադրության 41-րդ հոդվածի 12-րդ կետի վրա, այն է՝ ՀՀ օրենսդրության հրամանների հրահանգների կասեցումը եւ դրանք ուժը կորցրած ճանաչելու իրավունքի վրա: Բարսեղյանն հարցրեց, թե ավագ դպրոցի ներկայացուցիչներն ունե՞ն արդյոք որեւէ գրավոր հրաման, ցուցում, հիմք, թե ատեստացիա կամ թեստավորում է անցկացվելու դպրոցում: Եղած տեղեկությամբ, հունիսի 24-ից 3 օր առաջ Սերոբյանի հետ ունեցել են խորհրդակցություն եւ հանգել բանավոր պայմանավորվածության: Այդպե՞ս է:

Դարբինյանն ասաց, որ այո, պայմանավորվածությունը միայն բանավոր է:

Լ.Բարսեղյանը նորից խնդրեց ճշտել, թե 21-ին կայացած նիստի արձանագրություն կա՞: Դարբինյանն ասաց, որ 21-ին եղել է խորհրդակցություն, մանկավարժական խորհրդի նիստ չի եղել, եւ արձանագրություն չկա: Միայն բանավոր քննարկում եւ պայմանավորվածություն է եղել եւ 3 օր հետո կոլեկտիվը դեմ է հանդես եկել:

Ամփոփելով լսվածը, Լ.Բարսեղյանը դիմեց հոգաբարձուներին: Նա համարեց, որ այս բողոքը վերաբերելի չէ ՀԽ-ին, որն իրավասու չէ քննարկելու ռեկտորի ԺՊ-ի բանավոր քննարկումները ստորաբաժանումների, ավագ, դպրոցի, քոլեջի եւ աշխատակազմի հետ, քանի որ այդ ամբողջ աշխատանքային պրոցեսը մեծ մասամբ տեղի է ունենում բանավոր, բայց դրանք հրամանների, հրահանգների, կարգադրությունների չեն վերածվել: Գրավոր հիմքերի բացակայությամբ չի կարող քննարկվել, թե ինչ-որ բան է պարտադրվել կոլեկտիվին, որը կարող է հակասել կամ չհակասել ՀՀ օրենսդրությանը եւ քննարկվել ՀԽ ում: Դա չի նշանակում, որ ՀԽ-ն հրաժարվում է խորհրդատվություն տրամադրել, մասնակցել

քննարկումներին: Ընդհակառակը՝ միշտ պատրաստակամ է: Բայց բանավոր զրույցի բեկանումը ՀԽ լիազորություններում նշված չէ եւ տրամաբանությունից զուրկ է:
Այնուհետեւ զրույց-քննարկում ընթացավ կրթության որակի բարձրացման վերաբերյալ ՀԽ եւ ավագ դպրոցի ներկայացուցիչների միջեւ, շոշափվեցին արհմիության վերաբերող հարցեր, պայմանագրերի անժամկետ, մեկ կամ երեք տարի լինելու նպատակահարմարության, մրցույթների, կրճատումների անհրաժեշտության կամ հնարավորության վերաբերյալ: Արտահայտվեցին Ա.Դավինյանը, Ա.Մելքոնյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գարեգինյանը, Գ.Բարսեղյանը, Է.Մաթեւոսյանը:

Տիկին Մաթեւոսյանն առաջարկեց, որ դպրոցի ղեկավարությունը, հոգաբարձուներն էլ, եթե կարիք կա, միանալով գործընթացին, ներկայացնեն առաջարկներ ՇՊՀ ավագ դպրոցում տարակարգերով ուսուցիչների թիվն ավելացնելու, ուսուցիչներին տարակարգեր ստանալուն աջակցելու կամ խթանելու ձեւ գտնել:

Լ.Բարսեղյանը դիմելով Դարբինյանին, ասաց, որ համաձայն է տիկին Մաթեւոսյանի առաջարկի հետ, որ դպրոցի մանկավարժական խորհուրդը, տնօրենի հետ մեկտեղ, ուղղակի դատապարտված են քննարկելու որակի բարձրացման հարցերը, չսպասելով ռեկտորի առաջարկներին, իրենք կարող են առաջարկներ ներկայացնել: Լավ կլինի. որ դպրոցն առաջարկներ ներկայացնի ռեկտորին. թե ինչպես պետք է բարեփոխվի ավագ դպրոցը: Կոնսերվատիզմը, հարմարվողականությունն այս դեպքում օգուտ չեն բերելու:

Դավինյանը չհամաձայնեց, որ սուր է դրված տարակարգերի ու դպրոցի որակի հարցը: Բարսեղյանն բացատրեց, որ SWOT՝ ուժեղ եւ թույլ կողմերի, հնարավորությունների եւ ռիսկերի վերլուծությունը  չի վնասի, կարելի է 61 աշխատակցով նստել՝ թույլ եւ ուժեղ կողմերը բացահայտել դպրոցի, խնդիրները նախանշել, առաջնահերթություններ սահմանել ու աշխատել կատարելագործման ուղղությամբ:

Խոսք տրվեց Ե.Սերոբյանին: Սերոբյանը ընթերցեց ՇՊՀ կանոնադրության 55-րդ կետի 13-րդ ենթակետը, ըստ որի ռեկտորը «13) աշխատանքի ընդունում եւ աշխատանքից ազատում է աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ եւ կարգապահական տույժեր, կազմակերպում է աշխատողների ատեստավորումը.»:

Այսինքն, ինքը ապօրինի որեւէ քայլ չի արել, առաջարկելով ատեստավորում անցկացնել: Ինքը, մինչեւ դպրոց գնալը հանդիպել է տնօրենների ու փոխտնօրենների հետ, քննարկվել են հարցեր: Եթե 360-ից 130 աշակերտ ավարտել է, անգամ 360-ի աշակերտի պարագայում 60 ուսուցիչը 1/6 հարաբերակցություն է կազմում: ՀՀ-ում կա մանկավարժական դպրոցներում հաստիքների ցանկ, եւ ՇՊՀ դպրոցում կան հաստիքներ, որոնք ոչ միայն այլ դպրոցներում չենք հանդիպի, այլ նույնիսկ հաստիքի անվանումը կարդալուց կարող է զարմանանք: Քոլեջի տնօրենն ստանում է 109.000 դրամ աշխատավարձ, ավագ դպրոցի տնօրենի խորհրդականն ստանում է 139.000 դրամ աշխատավարձ: Նման բազում հաստիքներ քննարկվել են ղեկավարների հետ, եւ միայն դրանց կրճատումով դպրոցի մասով ծախսերի խնայողությունը կազմում է 10,5 մլն դրամ: Ամբողջ դպրոցի համար պետությունից ստացվում է 70 մլն: 10,5 միլիոնը անհասկանալի է, թե ինչի համար է տրվում: Արդյունքում քննարկվեց, թե ինչ

ընդունելություն կլինի ավագ դպրոցում: Նախորդ տարում բուհի կողմից կազմակերպած միջոցառումների շնորհիվ է, որ ապահովվել է 130 աշակերտի ներգրավում, այլապես կլինեին ավելի քիչ: Տրամադրվել է երկու ավտոբուս, որոնցով աշկերտները տեղափոխվել են ավագ դպրոց:

Սերոբյանը գտնում է, որ ՇՊՀ ավագ դպրոցը պետք է տարբերվի իր որակով մարզի բոլոր դպրոցներից: Դրա համար դպրոցում հանդիպման է գնացել: Նաեւ, այո գտնում է, որ պետք է աշխատեն այն մարդիկ, որոնք որակ կապահովեն: Կ.Սարուխանյանը ճշտեց, որ ընթացքը, որով նշանակում է կատարվում, եթե կատարվի մրցույթով, ապա կարող են պայմանագիր կնքել այն մարդիկ, որոնք կհաղթահարեն մրցույթի պայմանները: Սերոբյանը նշեց, որ պայմանագրերն ինքը չի ստեղծել, պայմանագիրը ունի բաղկացուցիչ մաս՝ համաձայնագիր, որում նշվում է, որ այսինչ թվականին կնքված պայմանագրում, բարի կամք դրսեւորելով, այսինչ կետերը փոփոխվում են: Հիմնադրամի բոլոր աշխատողներն ունեն որոշակի ժամկետով կնքված պայմանագրեր:

Ս.Մարտիրոսյանը արտահայտվեց, ասելով, թե ըստ երեւույթին ճիշտ բառապաշար չօգտագործելով սխալ ուղղությամբ է քննարկում գնացել: Այնուհետեւ առաջարկեց կասկածի տակ դնելով ամեն ինչ, կարելի է մտածել՝ ինչն է սխալ: Դիմելով դպրոցի եղած հանդիպումը կարելի է որպես վերջնագիր ընդունել, կարելի է որպես մարտահրավեր ընդունել, կարելի է որպես առաջարկ ընդունել, կարելի է որպես հնարավորություն ընդունել, աշխատել այլ կերպ ու հասնել արդյունքի: Թեստերը որպես պատիժ դիտարկելը միակողմանի է: Վերջերս եղավ Համահայկական թելադրություն, Դավիթ Գյուրջինյանի առաջարկով, որտեղ պատժի մասին խոսք չկար, այլ կար խրախուսում ՝ ավելի շատ ու լավ զբաղվել հայերենով: Բայց ով այդ քննության ժամանակ վատ արդյունք է ցույց տվել, իհարկե, գոնե իր համար հետեւություններ պետք է անի: Իհարկե պետք է ուսումնասիրվեն պատճառներ, թե, օրինակ, հարեւանությամբ գործող «Ֆոտոն» վարժարանի աշակերտների թիվն ինչու՞ է կտրուկ աճել: Մի՞ թե հետաքրքիր չէ պատճառը: Ինչու՞ ՇՊՀ ավագ դպրոցը չհիմանա մրցակցի հաջողության պատճառը:

Տիկին Շագոյանը ճշտեց, թե ուսուցիչների որ մասն է ՇՊՀ ում ստացել կրթությունը:

Հնչեց պատասխան, որ 90 տոկոսից ավելին: ՏիկինՇագոյանը դա համարեց պատասխան նաեւ բուհի թողարկած կադրերի: Այդ եզրակացությանը չհամաձայնվեցին մի քանի հոգաբարձուներ, նշելով, որ հիշատակված, ավագ դպրոցին մրցակից վարժարանում եւս դասավանդում են ՇՊՀ կադրերը:

Տիկին Շագոյանը կարեւորեց ավագ դպրոցի արհմիության կայացումը, որը կպաշտպանի ուսուցիչների շահերը: Բայց փոփոխությունների պահանջ, եթե չլինի, չեն լինի փոփոխություններ, իսկ մենք գիտենք, թե ինչպես են նախկինում աշխատանքի տեղավորվել ԽԾՔ սկզբունքներով: Դա չի նշանակում, որ պայմանագրերը պետք է մնան որպես ամեն տարի վախեցնելու, աշխատանքից ազատելու գործիք, այնքան, որ մարդը չկարողանա պլանավորել իր աշխատանքային գործնեության ապագան: Օրինակ դասախոսը պայմանագիր կնքելով 3 տարով, ունի աչքի առաջ 3 տարի, որպեսզի այլ աշխատանք փնտրի այլ համալսարանում:

Գ. Բարսեղյանը գտնում է, որ բոլոր ուսուցիչներն էլ պետք է ինչ-որ պարբերությամբ վերապատրաստում անցնի:

Ա.Խաչատրյանը ասաց, որ անձամբ ինքը 5 անգամ մասնակցել է որակավորման կուրսերի եւ դրա մեջ վատ բան չի տեսնում: Բարսեղյանը ճշտեց, որ խոսքն ատեստացիային է վերաբերում: Խաչատրյանը նշեց որ միեւնույն է, դրա մեջ վատ բան չի տեսնում: Է.Մաթեւոսյանը նշեց, որ իր աշխատանքի ընթացքում նկատել է, որ լավագույն ուսանողը չի գնացել աշխատելու դպրոց, այլ աշխատանք է գտել: Խնդրեց ճշտել, թե միայն մեկ տարո՞վ են պայմանագրերը բոլոր դպրոցներում: Սարուխանյանը նշեց, որ հիմնականում մեկ տարով են: Է.Մաթեւոսյանն ասաց, որ փաստորեն խնդիրը միայն ՇՊՀ ավագ դպրոցինը չէ, այլ ամբողջ հանրապետության մասշտաբով է: Ա.Գարեգինյանը նշեց ուսուցիչներ մակարդակի մասին, վերջին համապետական քննության ժամանակ 30%-ով փոփոխվեցին հարցաթերթիկները, զգալի գնահատականների իջեցում եղավ անցած տարվա համեմատ: Նույն դպրոցի ուսուցիչներն են պարապում աշակերտների հետ: Այսինքն խնդիրը ընդհանուր է, միայն ՇՊՀ դպրոցին չի վերաբերում:

Կ.Ավագյանը ասաց, որ դպրոցներում արդեն իսկ խմբավորում կա՝ տարրական, միջին, բարձր դասարաններ եւ ճիշտ կլինի պայմանագրեր կնքելիս հաշվի առնել կոնկրետ ուսուցիչների զբաղվածությունը կոնկրետ խմբի, դասարանի հետ: Այսինքն, եթե տարրական խմբի հետ նույն ուսուցիչը զբաղվելու է 3-4 տարի, ճիշտ կլինի նրա հետ պայմանագիր կնքել այդ ժամանակահատվածի համար:

Բարսեղյանն ամփոփեց քննարկումը, առաջարկեց գործընկերային կերպով շարունակել հարաբերությունները, քանի որ ոչ ոք սխալներից ապահովագրված չէ: Ինքը լավ ծանոթ լինելով կրթական համակարգին, կողմ է մրցույթներին, կողմ է, որ լինեն նաեւ 3-4 տարով պայմանագրեր, եթե լինեն թերացումներ, թող պայմանագրում նշված պատճառներով խզվեն: Եթե ատեստացիան երկուստեք ընդունելի կհամարեն, թող անցկացնեն, եթե ոչ՝ ոչ, թող լինի մրցույթ, դա է ճանապարհը: Հարցրեց Դարբինյանին՝ թե իսկապե՞ս խորհրդական ունի: Դարբինյանն ասաց, որ այո: Բարսեղյանը նշեց, որ դատելով գրված նամակից, լավ խորհրդատու չէ: Ու ընդհանրապես խորհրդականի նման հաստիքների հարցն իսկապես վիճելի է:

**Որոշեցին.**
Վերադրաձնել ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի դիմումը ոչ պատշաճ ձեւակերպված լինելու հիմքով:

Քվեարկեցին.
Կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:
Որոշումն ընդունվեց:

Քննարկման դրվեց օրակարգի հետաձգված հարցը.

**2.1. Պատմության եւ փիլիսոփայության ամբիոնի վարիչ Հ.Խորիկյանի դիմումի ուսումնասիրությունը: Դիմումն էլեկտրոնային եղանակով ուղարկվել է հոգաբարձուներին**:

Լսեցին.

Բարսեղյանը ներկայացրեց առկա փաստաթղթերը, Խորիկյանի դիմումը հոգաբարձուների խորհրդին, Սերոբյանի հանձնարարականի պատճենը եւ նկատողության հրամանը: Բարսեղյանը նշեց, որ նախ պետք է քննարկել դիմումի վերաբերելիությունը հոգաբարձուների խորհրդի լիազորությունների շրջանակում է, թե ոչ: Այնուհետեւ խնդրեց Խորիկյանին ներկայացնել իր հետ կապված խնդիրը, ակնկալիքը՝ վերաբերելիության մասին որոշում կայացնելու եւ վերաբերելի լինելու դեպքում քննարկելու ու որոշում կայացնելու համար:

Խորիկյանը ներկայացրեց դիմումում նշված հանգամանքները:

Խորիկյանը ներկայացրեց, որ իրեն տրված հանձնարարականը իր գործառույթների մեջ չէ եւ այդ աշխատանքը պետք է կատարեր անձնակազմի կառավարման եւ իրավական ապահովման բաժնի պետը, ինչպես այլ բուհ-երում: Գրել է այդ մասին Սերոբյանին: Սերոբյանը նորից պահանջել է կատարել հանձնարարականը: Խորիկյանը համարում է, որ իր աշխատանքը գիտամանկավարժական է, բայց իրենից պահանջվում է նկարագրել վարչական աշխատողի աշխատանքը, գործառույթների նկարագիրը, որը իր կարծիքով նույնն է, ինչ պաշտոնի անձնագիրը: Համարում է, որ պաշտոնի անձնագրի կազմումը պահանջում է համապատասխան իրավաբանական գիտելիքներ, քանի որ իրավունքների եւ պարտականությունների սահմանման հետ կապ ունի: Համարում է, որ գործավարի գործառույթների մասով կարող էր իրեն ներկայացվել նախագիծ, որի վերաբերյալ ինքը կարող էր ընդունելի եւ ոչ ընդունելի առաջարկներ անել միայն:

Խորիկյանը խոսեց նաեւ ուսումնական պլանների մասին: Բարսեղյանը խնդրեց մնալ դիմումի շրջանակներում:

Խորիկյանը հարց ուղղեց Սերոբյանին, թե եթե բոլոր ամբիոնների վարիչներին է դիմել, լաբորանտների գործառույթները նկարագրելու համար, ինքը գիտե՞ այդ գործառույթները: Եթե գիտե, ինչպե՞ս է հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում այլ, իրավագետի մասնագիտությամբ անձ ընդունվել աշխատանքի որպես լաբորանտի փոխարինող: Լաբորանտի մասնագիտական հմտությունները պետք է հստակ կապված լինեն իր աշխատած ամբիոնի մասնագիտական ուղղվածության հետ: Այնուհետեւ մի շարք կարգապահական խախտումներ ներկայացրեց, որոնք իր կարծիքով կատարվել են Սերոբյանի կողմից: Լ.Բարսեղյանը նշեց, որ հոգաբարձուների խորհրդի լիազորությունները սահմանափակվում են 19 կետով, որոնք նշված են կանոնադրության մեջ, այլ հարցերի համար կան այլ մարմիններ, եւ խնդրեց ներկայացնել, թե կոնկրետ ինչ է ակնկալում իր դիմումով եւ կից խոսքով, Խորիկյանը հոգաբարձուների խորհրդից:

Խորհրդյանը խնդրեց կանոնադրության համապատասխան կետի վրա հիմնվելով բեկանել իրեն տրված նկատողությունը:

Լ.Բարսեղյանը նշեց, որ ըստ կանոնադրության 41 կետի 12-րդ ենթակետի, կարող են բեկանել ՀՀ օրենսդրությանը հակասող ռեկտորի հրամանները, հրահանգները, ցուցումները, կարող են բեկանվել: Խնդրեց ներկայացնել ինչ հրաման, հրահանգ, ցուցումներ է ընդունել ռեկտորի պաշտոնակատարը, որպեսզի անցնեն ըստ էության քննարկման: Հիշեցրեց, որ դիմումում վկայակոչված են ՇՊՀ կանոնադրությունը, ամբիոնի եւ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունները, ներքին կարգապահական կանոնները: ՀՀ օրենսդրություն չկար դիմումի մեջ հիշատակված, այլապես այդ հարցը չէր տրվի: Իր Կարծիքով դիմումում նշված հանգամանքները վարչարարության խնդիրներ են, եւ վարչական ակտը իր կարծիքով պետք է բողոքարկվի դատարանում: Իհարկե, իրավաբանի կարծիքն էլ պետք է լսել: Բայց դիմումում նշված չէ նաեւ, թե ՀՀ օրենսդրության, որ օրենքի խախտումներին է վերաբերում, որպեսզի պարզենք վերաբերելիության հարցը ՀԽ-ին: Խնդրեց ներկայացնել խախտումները, եթե դրանք կգնահատվեն որպես խախտում, կքննարկեն, եթե կգնահատեն որպես խախտում՝ կկայացնեն որոշում ուժը կորցրած ճանաչելու կամ կասացնելու վերաբերյալ, բայց կրկնում է, որ ինքն իրավաբան չէ: Իսկ եթե վերաբերելի է ներբուհական վարչարարությանը, ապա դա ՀԽ լիազորություններից դուրս է:

Առաջարկեց լսել հոգաբարձուների կարծիքները եւ իրավախորհրդատուի կարծիքը, այն մասին, թե դիմումը ՀԽ-ին վերաբերելի է թե ոչ:

Իրավախորհրդատու Հովհաննիսյանը ներկայացրեց 41 հոդվածի 12-րդ ենթակետը, ասաց, որ նկատողությունը տրվել է ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կոնկրետ ՝ Աշխատանքային օրենսդրությամբ որոնց հղումները տրված են հենց հրամանի մեջ: Եթե խոսքը գնում է հրամանի ոչ իրավական լինելուն, ապա այս դեպքում աշխատանքային օրենսդրության հոդվածների հղումով հրամանը Խորհրդյանը կարող է վիճարկել միայն դատարանով:

Ս.Մարտիրոսյանը նշեց որ ներկայացված փաստաթղթերում կան առանց ամսաթվերի փաստաթղեր, որն ընթացակարգային խախտում: Այդ տեսակետից խոցելի է հանձնարարականը: Մնացածը կասի, երբ սկսվի ըստ էության քննարկումը:

Մելքոնյանին տրվեց խոսքը: Նա խնդրեց լիազորությունների շրջանակում հավուր պատշաճի լուծում տրվի հարցը դատական քաշքշուքի չհասցնելու համար: Լ.Բարսեղյանն ասաց, որ ՀԽ-ն կարող է անցնել իր լիազորությունները, այդ դեպքում դատարանի հարց նորից կառաջանա, կողմերից մեկը կարող է դիմել դատարան արդեն ՀԽ դեմ: Այսինքն կարեւոր է լիազորության սահմանում հարցի քննարկումը կամ չքննարկումը: Եվ ավելին, եթե նման հարցերը սկսի քննարկել ՀԽ-ն, ապա կդառնա լրացուցիչ դատական ատյան: Իհարկե, սա իր մասնավոր կարծիքն է:

Խոսքը տրվեց Ե.Սերոբյանին: Նա ասաց, որ աշխատանքային գործընթաց է եղել, հանձնարարականներն ուղարկվել են բոլոր ամբիոններ: Դիմելով Մարտիրոսյանին, նշեց, որ հանձնարարականում հստակ նշված է, թե մինչեւ երբ պետք է այն կատարվի:

Ուղարկել է հանձնարարական, որում ոչ մի խոսք չկա պաշտոնի անձնագրի մասին: Ստացել է պատասխան Խորիկյանից, որ խնդրում է իրեն չծանրաբեռնել իր գործառույթներից դուրս հանձնարարականներով: Այնուհետեւ Սերոբյանը նշեց, որ ամբիոնի կանոնադրությունում կետ կա, ամբիոնի վարիչի պարտականությունների մասին, ամբիոնի վարիչը իրականացնում է ամբիոնի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության եւ ամբիոնի աշխատողների պարտականությունների բաշխումը, վերահսկումը, դրանց կատարման ժամկետներն ու որակը:

Հաստիքացուցակով կա, օրինակ, պատմության ամբիոնի գործավար, որն իր կարծիքով եւ հաստիքացուցակով պատմության ամբիոնի աշխատող է: Այսինքն աշխատողները ոչ միայն պրոֆեսորադասախոսական անձնակազմն են, այլեւ ուսումնաօժանդակ անձնակազմը: Աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար ինքն ուզեցել է իմանալ գործավարը փաստացի ի՞նչ է կատարում, լաբորանտն ի՞նչ է կատարում: Ամբիոններ կան, որոնցում լաբորանտի հաստիք կա, բայց, որի իմաստն անհասկանալի է, օրինակ Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում: Ֆիզիկայի ամբիոնի լաբորանտն հասկանալի է, Հայոց լեզվի ամբիոնի լաբորանտն անհասկանալի է: Երկրորդ գրությունը Սերոբյանը ուղարկել է նորից հարգալից, խնդրելով մնալ բարեվարքության կանոնների մեջ: Երկրորդ օրը ստացել է զեկուցագիր, որն իր կարծիքով գրված է ոչ պատշաճ տոնով, ինքը չի ուզում ընթերցել, կցված է, կարող են ընթերցել: Այնուհետեւ Սերոբյանը նշեց, երկրորդ զեկուցագրով փաստորեն երկրորդ անգամ հրաժարվել են կատարել իր հանձնարարականը: Ինքն այդ զեկուցագիրն համարում է բացատրություն եւ ելնելով օրենքից՝ տվել է նկատողություն, այսինքն իրականացրել է իր լիազորությունները: Ենթատեքստով ասել է, որ մեկ տարի շարունակ փորձել է կառուցողական եւ ահնդուրժող դիրքորոշում որդեգրել, ներանձնային հարաբերություններում լարումն հասցնել մինիմումի, բայց երբ հասնում է նրան, որ արհամարհում են, երբ բոլոր ամբիոնների վարիչները կատարել են հանձնարարականը: Ինքը գրում է՝ «հարգելի Խորիկյան» եւ ստանում պատասխան՝ «ի պատասխան ձեր հանձնարարականի»: Նշեց, որ հետաքննություն է գնում, իրենից քննիչը ցուցմունք է վերցրել:

Լ.Բարսեղյանն հարցրեց, թե նկատողության մասո՞վ է հետաքննությունը: Խորիկյանը պատասխանեց, որ դիմել է ոստիկանություն պաշտոնական դիրքի չարաշահման վերաբերյալ դիմումով: Լ.Բարսեղյանն հոգաբարձուներին խնդրեց արտահայտվել միայն հարցի ՀԽ-ին վերաբերելիության մասին:

Ա.Խաչատրյանն ասաց, որ եթե հետաքննչական մարմիններ են զբաղվում, ապա այս հարցի քննարկումը ՀԽ լիազորությունների շրջանակից դուրս է գալիս: Մանրամասնեց, քանի որ կարող են տարբերվող լուծումներ լինել:

Կ.Սարուխանյանը նշեց, որ արժեր քննարկել, բայց քանի որ համապատասխան մարմիններն սկսել են զբաղվել, հետեւաբար չի կարծում, որ հարցի քննարկումն ՀԽ-ում պետք է շարունակել:

Լ.Բարսեղյանը նշելով, որ երկու հոգաբարձուի խոսքում էլ ոստիկանությանն հղում հնչեց, հարցրեց. –Պարոն Խորիկյան, Դու՞ք եք դիմել ոստիկանություն:

-Այո:
-Ձեր վարկածը պաշտոնական դիրքի չարաշահումն է:
-Այո:

Լ.Բարսեղյանը հստակեցրեց, որ դիմել են ոստիկանություն քրեական հանցակազմի առկայության կասկածով: Չի բացառվում ոչ հանցակազմի առկայությունը, ոչ բացակայությունը: Եթե պարզվում է, որ հանցակազմ չկա, այս խնդիրն էլի լուծում չի ստանում, մնում է վարչական հարթությունում, աշխատող-գործատու հարաբերությունների մակարդակում:

Տիկին Շագոյանը հարց բարձրացրեց, արդյո՞ք կանոնադրության 41-ի 12 կետը ենթադրում է նման դիմումների քննարկում, լավ կլիներ, որ խորհրդատվություն ստացվի ոչ թե բուհ-ի իրավաբանից, քանի որ հնարավոր է շահերի բախում, այլ ինստիտուցիոնալ առումով անաչառ գիծ պահելու համար նման որոշումներ կայացնելիս դիմել նախարարության իրավաբանական բաժնին խորհրդատվության ստացման համար: Հատկապես հաշվի առնելով, որ Խորիկյանը դիմել է պատկան մարմիններին, այսինքն ՀԽ-ից դուրս է հանել քննարկումը, ապա առնվազն մինչեւ այդ գործը չհանգուցալուծվի, չպետք է քննարկվի: Միգուցե այնտեղ հանգուցալուծվում է: Եթե չի հանգուցալուծվում եւ վերադառնում է, ապա կուզենա, որ ՀԽ-ն գրավոր կամ բանավոր դիմել նախարարության իրավաբանական բաժնին խորհրդատվության ստացման համար:

Ս.Մանուկյանը նշեց, որ եթե որոշենք, որ դա մեր իրավասությունն է եւ կայացնենք որեւէ որոշում, մյուս մարմինը կայացնի այլ որոշում, ապա մենք կմնանք երկու որոշումների արանքում մեկը կատարելու անհասկանալի իրավիճակում: Ուստի առաջարկում է հարցի քննարկումն հետաձգել, մինչեւ ոստիկանությունը կամ քննչական մարմինն հանգի ինչ-որ հանգուցալուծման:

Լ.Բարսեղյանն արձագանքեց, որ ոստիկանությունը նայում է քրեական հանցակազմի առկայության կամ բացակայության հարցը, նույնիսկ, եթե լինի այդ հանցակազմը, կարող է քննել մինչեւ 6 ամիս կամ մեկ տարի: Հաջորդը, համաձայն է տիկին Շագոյանին, որ այլընտրանքային իրավաբանական մեկնաբանման կարիք էլ կա եւ առաջարկում է դիմումի քննությունը կասացնելու որոշում կայացնել ՀԽ-ում եւ դիմել ԿԳՆ իրավաբանի կամ մասնավոր իրավաբանի, կամ արդարադատության նախարարությանը, որպեսզի ստացվի կարծիք վերաբերելիության վերաբերյալ:

Որոշեցին. Կասացնել Խորիկյանի դիմումի քննարկումը, պարզելու համար որքանով է այն վերաբերելի ՇՊՀ ՀԽ-ին եւ դիմել ՀՀ ԿԳՄՄՆ եւ արդարադատության նախարարությանը՝ պարզաբանումներ ստանալու ՇՊՀ ՀԽ-ին դիմումի վերաբերելիության մասով:

Քվեարկեցին
Կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0
Որոշումն ընդունվեց:

3. Այլ հարցեր:

3.1. ՀԽ նախագահի եւ անդամների ու ՇՊՀ դոկտորների եւ գիտական խորհրդի հետ ՀԽ անդամների հանդիպումների մասին.

Հարցի հետ կապված Բարսեղյանը հաղորդում ներկայացրեց բուհի գիտությունների դոկտորների եւ գիտական խորհրդի հետ հանդիպումների մասին: Խթան հանդիսացավ նախարարի հայտարարությունը, դոկտորներից մեկի բաց նամակը: Առաջին հանդիպումը տեւել է 3 ժամ, երկրորդ հանդիպումը գիտխորհրդի հետ տեւել է 2 ժամ 5 րոպե: Տրվել են մամլո հաղորդագրություններ: Երկու հանդիպումներում էլ դիրքորոշում է արտահայտվել լուծարման թեմայի հետ կապված: Բարսեղյանը նշեց որ բուհն ունեցել է պարտավորություններ: Երկու դեպքում էլ առաջարկ է հնչել հանդիպել նախարարի հետ: Երկուստեք ընդունվել է հանդիպման գաղափարը: Նախարարը պատրաստ է ընդունել կոլեկտիվի անդամներին, ձեւաչափը թողնվել է Սերոբյանի, գիտական խորհրդի կամ ռեկտորատի հայեցողությանը: Հանդիպումը տեղի կունենա սեպտեմբերին մոտ:

Երկու հանդիպումների ընթացքում էլ մտքեր են հնչել ռեկտորի ընտրության ընթացակարգի եւ պայմանների հետ կապված: Հասկանալի է, որ ամեն գնով ռեկտոր ընտրելու մասին չէ խոսքը: Հնչել են տարբեր մտքեր, սկսած 56-րդ հոդվածը փոխելուց, վերջացրած քվեարկությունից, վարկանիշային քվեարկություն եւ այլն, նաեւ մտահոգություն է հնչել, որ մեխանիզմը ընդհանրապես վերանայման կարիք կա, կարելի է քվեների կշռի մեջ մտցնել բուհի անձնակազմի ինչ-որ կերպ կազմակերպվող էլեկտրոնային քվեարկությունը, դոկտորներին է առաջարկվել ներկայացնել առաջարկներ գրավոր: Տեղեկացվածության խնդիր բացահայտվեց, օրինակ, որ առաջարկները, որոնք հնչում էին, արդեն հնչեցվել, քննարկվել արձանագրվել էին ՀԽ արձանագրություններում, որոնք բաց են, տեղադրված են կայքում, նիստերը եւս բաց են եղել:

Գիտական խորհրդի հետ հանդիպման ընթացքում բացահայտվեց, որ վրդովվել էին «ցրել» բառից, որն հնչել էր գիտխորհրդի վերաբերյալ: Ներկայացվեց, որ գիտխորհրդի կազմի վերաբերյալ աշխատանքային խումբ է եղել բուհում, գիտխորհրդի կանոնադրության եւ ՇՊՀ կանոնադրության շտկման համար, կանոնադրության փոփոխությունները մանրակրկիտ քննարկվել են, վերջնական տեքով ընդունվել, գրանցվել պետռեգիստրում:

Նոր կանոնադրության ընդունումից հետո գիտխորհրդի կազմը պետք է համապատասխանեցվի կանոնադրությանը: Գիտխորհրդի կազմը 80 տոկոս մնում է գրեթե նույնը, 20 տոկոսի չափով փոփոխվում է: 27 անդամից դառնում է 39-45: Խոսվել է էթիկայի վարքականոնի, վարքականոններն հսկող մարմնի մասին, վճիռների ու վարքականոնների աշխատանքային պայմանագրերին կապելու միջոցով կարգավորել աշխատանքային հարաբերություններն ու կոնֆլիկտները: Դա նաեւ Բոլոնիան պրոցեսների հետ կապ ունի եւ կապ ունի նաեւ հավատարմագրման հետ: Եվ ամբիոնների մեկ երկու վարիչների վարք է քննարկվել, որոնց հետո կանդրադարձվի:

Խոսքը աշխատանքային հարաբերություններում անընդունելի բառապաշարի օգտագործման մասին է: Այս մասին եւս խոսվել է եւ դոկտորների, եւ գիտխորհրդի հետ հանդիպումների ընթացքում: Առաջարկվել է նաեւ դոկտորական խորհուրդ ստեղծել:

Սուրեն Մանուկյանը նշեց որ նախարարի խոսքին համալսարանից արձագանքներն ընթերցել է եւ իր մոտ հարց է ծագում ՝ իրո՞ք մարդիկ չեն ընկալում, որ ներսում խնդիրներ կան, թե՞ դա ուղղակի պաշտպանական մեխանիզմ աշխատեց նախարարին հակադարձելու համար: Դա իր համար շատ կարեւոր է, քանի որ գիտխորհուրդը համալսարանի ամենակարեւոր մարմինն է, եւ եթե գիտխորհուրդն ընկալում է, որ կան հիվանդության նախանշաններ, մենք բուժման ակնկալիք ունենք ու շատ մեծ, եթե չի ընկալում, ապա խնդիրն ավելի մեծ է, քան մենք պատկերացնում ենք:

Լ.Բարսեղյանը նշեց, որ ինքն էլ է տեսել այդ ռեակցիան: Այսպես թե այնպես համալսարաններում պահպանողականություն կա: Միեւնույն ժամանակ իրեն թվում է, որ կարողացել է իր մտահոգությունները փոխանցել, առանց նախարարի դիրքորոշման շեշտման, քանի որ ասվել է, որ վերադասություն չկա նախարարության եւ ՀԽ միջեւ: Տպավորությունն այն է, որ բոլորն էլ շատ լավ գիտեին եւ շատ լավ հասկանում էին խնդիրները, մի երկու երեւույթի մասին է միայն իրազեկել: Ուրիշ հարց է, թե համախումբ կերպով կամք կդրսեւովի՞ խնդիրները կարգավորելիս:

Է.Մաթեւոսյանը փորձեց ներկայացնել բուհի առկա վիճակը: Այսօր ՇՊՀ-ն ունի 31 կրթական ծրագիր բակալավրիատում, ունի 22 կրթական ծրագիր մագիստրատուրայում, եւ 2 նոր ձեւավորված մասնագիտական կրթական ծրագիր, 1 ասպիրանտ, 14 հայցորդ: Անցած տարվա դրությամբ ունեցել ենք 154 դիմորդ, այս տարվա միայն առաջին փուլում ունեցել ենք 334 դիմորդ: Այսինքն կրկնակի ավել: Ունեցել ենք 683 շրջանավարտ, որոնցից 24% -ն ստացել է կարմիր դիպլոմ: Ունեցել ենք 2016-ից գիտական տեղեկագիր, ունեցել ենք միջազգային գիտաժողով 215 մասնակցով, տպագրվելու է 56 հոդված: Նաեւ անդրադարձավ գիտխորհրդի աշխատանքին: Գիտխորհրդում այս ուսումնական տարվա ընթացքում հաստատվել են 55 մասնագիտական կրթական ծրագրեր, 5 ուսումնական ձեռնարկ է երաշխավորվել տպագրության, երկու մենագրություն է երաշխավորվել տպագրության, երկու ատենախոսության թեմա է հաստատվել, եւ ներքին ու արտաքին դրամաշնորհներից 3-ն է հաստատվել: Սերոբյանն ավելացրեց, որ գիտպետկոմից ֆինանսավորվող 4 թեմա է եղել, հիմա ունեն 9 թեմա:

Է.Մաթեւոսյանն հորդորեց ՀԽ-ին ավելի հաճախ հանդիպել գիտխորհրդի, ամբիոնների, ֆակուլտետների հետ, կուզենար տեսնել կապ, փոխկապակցված աշխատանք: Որովհետեւ կան բաներ, որոնք չգիտեն մեկը մյուսի աշխատանքի մասին, օրինակ ինքը կողքի ֆակուլտետից բավարար չափով տեղյակ չէ: Լ.Բարսեղյանը խնդրեց հրավիրել: Կ.Ավագյանը նշեց, որ հանդիպումներից պարզվեց, որ բուհ-ի կոլեկտիվը կարծես թե տեղյակ չէ ՀԽ բաց աշխատելու, մանրակրկիտ աշխատանքի, բոլոր հարցերը մինչեւ վերջ մաղելու սկզբունքից, չի օգտվում տեղեկացված լինելու իր հնարավորությունից, չեն ծանոթանում նիստերի արձանագրություններին եւ երբեմն նույնիսկ ունեին թյուր կարծիքներ ունեին ՀԽ մասին: Կարծիք հայտնեց, որ բուհից ընտրված ՀԽ անդամները պետք է փորձեն

հրապարակայնացնել ՀԽ աշխատանքի արդյունքները: Լ.Բարսեղյանը ամփոփեց, որ սա ընդամենը հաղորդում էր հանդիպումների մասին:

Այս կետով որոշում չէր ենթադրվում եւ չընդունվեց:

### 3.2. Աուդիտի մասին վերապահումների վերաբերյալ

Լսեցին.
Բարսեղյանն առաջարկեց, որ ովքեր էլեկտրոնային քվեարկության ժամանակ վերապահումով էին ընդունել աուդիտը հաստատելու առաջարկը, 10-օրյա ժամկետում ներկայացնեն իրենց հարցերը, որպեսզի դրանք ուղարկվեն աուդիտորին:

### 3.3. Ակադեմիական վարժարանի տնօրենի դիմումի մասին

Լսեցին.
Սերոբյանը ներկայացրեց, որ քաղվածք է վերցվել արձանագրությունից, ուղարկվել է նախարարություն, բայց դեռեւս ոչ նախարարությունից է պատասխան ստացվել, ոչ վարժարանից: Պարզվել է քանի դասարան ունի վարժարանը, երկու հարկը լիովին բավարարում է նրանց պահանջները, 4-րդ հարկում հանրակացարանն էր, մանրամասն նայել է՝ 22 մահճակալ տեղ ստեղծելու հնարավորությունը, դեկաններին հանձնարարվել է պարզել հանրակացարանի պահանջարկը, պահանջի ընդհանուր թիվը կազմել է 25-26 անձ: Վերանորոգման համար կպահանջվի առավելագույնը մոտ 5 մլն դրամ: Բայց հանրակացարանի ծայրահեղ կարիք, ըստ երեւույթին, կարող են ունենալ մոտ 5 ուսանող, քանի որ բավականին էժան եւ կահավորված բնակարաններ կան Գյումրու Անի թաղամասում:

Լ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց հաղորդման համար, եւ կարեւորեց, որ ուսանողները իմանան, որ կա նման հնարավորություն եւ կարող են դիմել:

### 3.4. Դասախոս Վ.Աբրահամյանի դիմումի լուծումը: Ի՞նչ է արվել քննությունների կազմակերպման մասով:

Լսեցին.
Սերոբյանը ներկայացրեց խնդրի կարգավորման ընթացքը: Այն կարգավորման փուլում է: Զրուցել է ուսանողների հետ, ամեն մեկին բացատրվել է իրենց պարտականությունների չկատարման հետեւանքը: Ուսանողների կողմից այդ ընկալվել է որպես 0-ներով գնահատվելու սպառնալիք, բաց նամակ են ուղարկել ԿԳՆ նախարարին եւ վարչապետին: Պրոցեդուրան ներկայացվել է նախարարություն: Դրսեւորելով բարի կամք, ռեկտորի ԺՊ-ն որոշել է քննությունը տեղափոխել հուլիսի 4-ին, ուսանողների համար լրացուցիչ դասընթացների գրաֆիկ է կազմվել, որին իրենք շարունակում են չգալ: Երկու օր էլ առողջական խնդիրներ է ունեցել դասախոսը, բայց գրել է զեկուցագիր, որում պատրաստականություն է հայտնել լրացնել այդ օրերը: Ինքը գրավոր հարցում է ուղարկել Խորիկյանին, թե արդյո՞ք ժամանակին ստացել է դասախոսի կողմից հարցաշարերը,

հարցատոմսի նմուշը եւ ստորագրված են դրանք, թե չէ: Որոշվել էր 3 դասախոսի մասնակցությամբ կազմակերպել քննությունը եւ Խորիկյանին առաջարկվել էր ամբիոնում քննարկել եւ տալ երրորդ քննող դասախոսի թեկնածություն: Այսինքն Վ.Աբրահամյանը եւ Հ.Խորիկյանը լինելու էին հանձնաժողովում որպես դասավանդող եւ ամբիոնի վարիչ: Երրորդի մասին Խորիկյանն առաջարկ չի ներկայացրել, 15 օր հետո բերել է մի գրություն, որում գրված էր, որ ամբիոնում քննել են առաջարկը եւ ոչ մեկը չի ցանկացել մասնակցել, այսինքն մարդ չի առաջադրվել, ինքը Պողոսյանի հետ քննարկել են հարցը եւ դիմելու են քաղաքում եղած բուհ-երից մեկին, երրորդ մասնագետը կապահովվի: Կարող է խնդիր առաջանալ, թե այդ պատմական շրջանի մասնագետը չէ, բայց այդ շրջանի մասնագետը չէ նաեւ Խորիկյանը: Ուսանողները կստանան իրենց գնահատականը, որը կմիջինացվի: Այդ ամենը կկազմակերպի Բ.Պողոսյանը, ինքը տեղում չի լինի, քանի որ վիրահատվելու է: չեն մասնակցի ուսանողները, 0-ները կդրվի տեղեկագիր, իրենք կտեղափոխվեն հաջորդ կուրս ունենալով 6 կրեդիտ պարտք: Չի կատարի դեկանը ժամանակացույցը՝ կստանա նկատողություն, ամբիոնի վարիչը չի կատարի՝ կստանա նկատողություն: Այս դաշտում հարցը լուծված է:

Լ.Բարսեղյանն հետաքրքրվեց, թե ինչու այդ սանկցիաները չեն կիրառվել առաջին քննության ժամանակ, ինչու է նշանակվել լրացուցիչ քննություն, ինչու են նշանակվել լրացուցիչ դասաժամեր: Չէ՞ որ ՀԽ-ում քննարկվել է այդ հարցը եւ խորհուրդ է տրվել ԺՊ-ին վարվել ըստ կարգերի: Սերոբյանը պատասխանեց, որ կանգնած էին պետական քննությունների նախաշեմին եւ ստեղծել ավելորդ լարվածություն չեն ցանկացել:

Լ.Բարսեղյանն ասաց, որ ուսանողն ունի պայմանագրային պարտավորություն՝ գալ եւ սովորել: Չի կարելի պարտականություններին կամակորությամբ մոտենալու նախադեպեր ստեղծել: Սերոբյանը նշեց, որ մի օր պիտի կիրառի այդ սանկցիաները, բայց ավելորդ լարվածություն ուղղակի կարող էր վնասել ընթացքին: Լ.Բարսեղյանը նշեց, որ ընդամենը քննություն էր, պետք էր հանձնել: Անձնական խնդիրներ լուծելու համար նման խնդիրներ ստեղծելն անթույլատրելի է: Այնուհետեւ հետաքրքրվեց Սերոբյանից, թե հարցաշարն ստորագրվա՞ծ է, նմուշներն հաստատվա՞ծ են: Սերոբյանը պատասխանեց, որ հաստատված են եւ ստորագրված: Հարցաշարերը տրամադրվել են ուսանողներին: Լ.Բարսեղյանը հանձնարարեց հետեւողական լինել եւ քննության չներկայանալու դեպքում նշանակել նախատեսվող գնահատականը, եթե հարգելի չէ բացակայությունը: Ե.Սերոբյանը նշեց, որ մի անգամ իրեն հաջողվել է մարել նմանատիպ կոնֆլիկտ 4-րդ քաղաքագիտության կուրսում, եւ դրա համար է դիմել նման մեթոդի: Է.Մաթեւոսյանը նկատեց, որ ներկաները բոլորն էլ ուսանող են եղել, եւ իրենց չի էլ հետաքրքրել հարցերը քանիսն են:

Լ.Բարսեղյանը նորից կրկնեց, որ պետք է հիմնվել պայմանագրային պարտավորությունների վրա: Ասաց, որ որոշում չեն ընդունում այս հարցով, բայց հարցրեց ՀԽ անդամներին, թե կո՞ղմ են արդյոք, որ ցանկացած դեպքում բարձր դասվի համալսարանի եւ ուսանողի միջեւ կնքված պայմանագրի պահանջը: Առակություններ չեղան:

### 3.5. Ուսանողական խորհրդից ՇՊՀ ՀԽ կազմում հոգաբարձուների պատվիրակման մասին

Լսեցին.
Բարսեղյանը ՀԽ թափուր կամ բացակայող հոգաբարձուների տեղերի մասին ներկայացրեց, որ խոսել է Հ.Արշամյանի եւ Ա.Ենգոյանի հետ: Հ.Արշամյանը կանոնավոր մասնակցել է նիստերին, մինչեւ Համահայկական հիմնադրամի տնօրեն նշանակվելը, որի պատճառով այժմ հաճախ բացակայում է ՀՀ-ից: Ինքը խնդրել է, որ եթե Արշամյանը չպետք է կարողանա կանոնավոր գալ, հրաժարականի դիմում գրի, որպեսզի նրա փոխարեն այլ անդամ ներգրավվի: Ա.Ենգոյանը ազատվել է աշխատանքից եւ համարում է, որ ի պաշտոնե նշանակված լինելով հիմա իրավասու չի համարել մասնակցել նիստերին: Բացատրվել է, որ ինքը կարող է գալ եւ մասնակցել խորհրդի նիստերին, ի պաշտոնե չի եղել իր նշանակումը, բայց դեռեւս պատասխան չկա: Այս հարցը եւս կփորձենք կարգավորել: Ուսանողներից 5-ը դադարել են լինել ուսանողներ, թեպետ նրանցից 4-ը նորից դարձել են ուսանող, դիմել են մագիստրատուրա: Մեր կանոնադրության մեջ նշված է, որ ուսանողները կարող են լինել ՀԽ անդամ եւ երբ իրենց ուսանող լինելը դադարել է, անմիջապես ըստ կանոնադրության ռեկտորի պաշտոնակատարը իրազեկում է ուղարկել ՀԽ նախագահին եւ վարչապետին, որ 5 հոգու լիազորությունները պետք է դադարեցվեն;

Քանի դեռ վարչապետը հարաման չի ստորագրել, որով դադարեցնում է լիազորությունները, նրանք դեռ մնում են ՀԽ կազմում: Բայց օրինական խզում կար, անկախ նրանց նորից ուսանող դառնալու հանգամանքից եւ 30-օրյա ժամկետում նրանց տեղը պետք է լրացվեր նոր անդամներով: Ուսանողական խորհուրդը, որն ինքնուրույն մարմին է, ինչ-որ մի ընթացակարգով ընտրել էր 5 հոգու, բայց այդ ընտրությունը քննարկելուց հետո, որին ներկա էին ուսխորհրդի նախագահը, հոգաբարձու ուսանողներից երկուսը եւ ուսխորհրդի նախագահությունից 3-ը պարզվեց, որ կանոնադրությունից տեղյակ չլինելու պատճառով խախտումներ էին թույլ տվել նոր պատվիրակների ընտրելիս: Կանոնադրության 28-րդ հոդվածն ասում է. -28. ՇՊՀ-ի սովորողների ներկայացուցիչներից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների, մասնաճյուղերի ուսանողական խորհուրդները: Ուսանողական խորհուրդների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն եւ ակտիվ հասարակական դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող: Ուսանողական խորհուրդն ընտրում է ֆակուլտետներից առաջադրված ուսանողների թեկնածուներին եւ ներկայացնում լիազոր մարմին: Սովորողների կողմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը եւ խորհրդի անդամի լիազորություններն իրականացնում են ՇՊՀ-ում իրենց սովորելու ժամանակահատվածում:

Այնինչ ուսանողական խորհուրդը ֆակուլտետային խորհուրդների նիստեր գումարել չեն հանձնարարել, չեն իմացել այդ մասին, ֆակուլտետային խորհուրդների նիստեր չեն գումարել, ֆակուլտետային խորհուրդների նիստերում թեկնածու չեն առաջադրել, այդ թվում ռազմական ամբիոնից, թեկնածուների ցանկը չեն փոխանցել ուսանողական խորհրդի նախագահությանը, որպեսզի նրանք էլ այդ կազմից ընտրեին: Իրենք ընդամենը նախագահության նիստ են հրավիրել, ու առարկել առաջադրելեն թեկնածուներ: Ի դեպ, ֆակուլտետային խորհուրդների ուսանողական խորհուրդների նախագահները, իրենց կանոնադրությամբ, ի պաշտոնե ուսանողական խորհրդի նախագահության անդամ են, այսինքն 9-ից 4-ը: Առաջադրվել եւ առաջադրվել էին, ընտրել 5 հոգու: Լ. Բարսեղյանը եւ

Բ.Պողոսյանը խորհրդատվական հանդիպման ընթացքում մանրամասն բացատրել են, որ կատարվածն հակասում է ՇՊՀ-ի կանոնադրությանը, 28-րդ հոդվածին, որում հստակ ասվում է, որ ուսանողական ֆակուլտետային խորհուրդների նիստեր պետք է լինի:

Պաշտոնապես Սերոբյանը, ցանկն ստանալու պես պետք է տեղեկացնի ուսխորհրդի նախագահությանը, որ իրենց ընտրությունը տեղի է ունեցել բուհի կանոնադրության 28-րդ հոդվածի խախտմամբ: Դա եւս բացատրվել է հանդիպման ներկա ուսխորհրդի նախագահության անդամներին: Խնդրվել է նախքան նման քայլի գնալը նոր ընտրություն կազմակերպել, ընտրության տեխնիկայի մեկնաբանմամբ: Իրենք ընդունել են, որ այդ խախտումը տեղի է ունեցել: Ոչ մի հակաճառություն չի եղել, շատ գործընկերային մթնոլորտում է անցել քննարկումը: Պատրաստակամ են եղել հետեւել ընթացակարգին, անցնելով բոլոր փուլերը անցկացնել նոր ընտրություն, բայց դա, ցավոք, կարող է 30-օրյա ժամկետում չլինել: Այսինքն կարող է սեպտեմբերին միայն հնարավոր լինի կատարել այդ ընտրությունը: Սերոբյանը նշեց, որ նախարարություն ուղարկվել է համապատասխան նամակ, որպես իրազեկում: Լ.Բարսեղյանը շեշտեց, որ իրենք ընդամենը խորհրդատվական, գործընկերային մասնակցություն են բերել գործընթացը կանոնադրությանն համապատասխան անցկացնելու համար: Որեւէ վերադասություն ճնշում չի եղել: Բայց, եթե հանկարծ վարչապետը դադարեցնի 5 ուսանողների լիազորությունները, մեր ՀԽ-ն բաղկացած կլինի 19 անդամից, մինչեւ նոր ընտրությունը կայանա:

Կ. Ավագյանը նշեց, որ ՇՊՀ կայքում փնտրել եւ չի գտել ուսխորհրդի կանոնադրությունը, որեւէ փաստաթուղթ չկա ուսխորհրդի կողմից տեղադրված: :.Բարսեղյանն առաջարկեց ՀԽ անդամ ուսանողներին փոխանցել ուսխորհրդի նախագահին, որ բոլոր փաստաթղթերը, որ առկա են, կարիք կա կայքում զետեղելու: Դա վերաբերում է ուսանողական ֆակուլտետային խորհուրդների նիստերի, նախագահության նիստերի, համագումարների արձանագրություններին ու որոշումներին: Սա հրաման չէ, ՇՊՀ կայքը նման բաժին ունի եւ այն պիտի արդյունավետ օգտագործվի:

Պարզվեց որ ուսխորհուրդը կնիք ունի, որն իրավական ուժ չունի, քանի որ իրավաբանական անձ չէ:

Ս. Մանուկյանը հարցրեց գիտխորհրդի կողմից նշանակված հոգաբարձուների մասին: Քանի որ կանոնադրության փոխվելով, գիտխորհրդի վերակազմակերպման արդյունքում պետք է փոխվեն նաեւ գիտխորհրդի կողմից պատվիրակվող հոգաբարձուները:

Լ. Բարսեղյանը պատասխանեց, որ գիտխորհրդի կազմը փոխելուց առաջ պետք է որ ֆակուլտետային խորհուրդների եւ ամբիոնների կանոնադրությունները համապատասխանեցվեն ՇՊՀ կանոնադրությանը: Կանոնադրությունը փոխվել է 3 ամիս առաջ, եւ ճիշտ կլիներ, որ այդ գործընթացն արդեն ավարտված լիներ: Բայց դա ՀԽ-ից է կախված չէ: Կախված է դասախոսներից եւ գիտխորհրդից:

Ս.Մանուկյանը նշեց, որ փաստորեն դեռ ոչ մի բան արված չէ այդ ուղղությամբ: Է.Մաթեւոսյանը պատասխանեց, որ ֆակուլտետային կանոնադրությունները վերամշակված են, բայց դեռ հաստատված չեն:

Լ.Բարսեղյանն իրազեկումը համարեց ավարտված:

**3. 6. Հոգեբանության, սոցիոլոգիայի եւ սոցիալական աշխատանքի ամբիոնի մի խումբ դասախոսների դիմումը ռեկտորի ԺՊ-ին (Դիմումն ուղարկվել էր հոգաբարձու Մարտիրոսյանին, նշված, որ ուղարկվելու է նաեւ Սերոբյանին, բայց Սերոբյանը չէր ստացել)**

Լսեցին.
Լ.Բարսեղյանը ներկայացրեց Մարտիրոսյանին ուղարկված դիմումը, որը սակայն գրված լինելով մայիսի 3-ին, Ե.Սերոբյանին Վ.Պապիկյանի կողմից չի փոխանցվել: Այսքանը խնդրեց ընդունել ի գիտություն:
Դիմումի հիմքեր եւս չեն տրվել:
Ուստի առաջարկեց դիմումն համարել առոչինչ: Առարկություններ չեղան:

**3.7 Ռեկտորի ընտրության մեխանիզմների վերանայման հարցը:**

Լսեցին.
Գ.Շագոյանը օգտվելով Կ.Սարուխանյանի ներկայությունից, խնդրեց նրան որպես ԱԺ պատգամավոր, ռեկտորի ընտրության մասով, օրենսդրության հետ հակասող կետեր է գտել բուհական եւ հետբուհական կրթության նոր օրենքի նախագծի հետ կապված, որը դրվա ծ է E-Draft-ում: Այնտեղ նշված է կառավարման խորհուրդ տերմինը, երկու տեղ փակագծերում նշված է, որ դա հոգաբարձուների խորհուրդն է: Իսկ մեր մոտ բուհերը հիմնադրամներ են իրավաբանորեն: Իսկ հիմնադրամների մասին օրենքում, հոդված 22-ում գրված է, որ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պետք է կազմված լինի այնպիսի անդամներից, ովքեր նույն հիմնադրամի այլ մարմնի անդամ չեն: Այստեղ, ըստ տիկին Շագոյանի, կա հակասություն եւ ձեւի եւ բովանդակության մեջ: Բովանդակության մեջ հակասությունը այն է, որ կատարյալին մոտ ընտրություն անցկացվեց, բայց արդյունքում տեսանք, որ ՀԽ-ն այդ ամենից հետո իր որոշումները կայացնելիս կարող է կաշկանդվել, գոնե իր կարծիքով, տեսավ, որ մարդիկ, որոնք իրենց վերադաս են ընտրում, կարող են ունենալ բազմաթիվ կաշկանդող հանգամանքներ: Փորձից ելնելով, գտնում է, որ կա շահերի բախման իրավիճակ: Ճիշտ է գտնում կառավարման խորհուրդ եւ հոգաբարձուների խորհուրդ եզրույթների եւ ֆունկցիաների սահմանազատումը: Նրանք իր կարծիքով պետք է զբաղվեն տարբեր ֆունկցիաներով: Ելնելով Ամերիկյան համալսարանի փորձից, կարելի է հաշվի առնել նաեւ համալսարանի դասախոսների էլեկտրոնային քվեարկության արդյունքը:

Քանի որ նոր օրենքը դեռ չի հաստատված, խնդրահարույց է համարում կառավարման խորհրդի եւ հոգաբարձուների խորհրդի ֆունկցիաների չսահմանազատումը, որը կարող է բերել շահերի բախման: Մեր բուհի օրինակը ցույց է տալիս, որ դա հնարավոր է: Միաժամանակ ՇՊՀ-ն, ունենալով ամենաբաց գործող ՀԽ-ն, որը ունի երկու պատգամավոր

ԱԺ-ում, ճիշտ է համարում ազդել օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Լ. Բարսեղյանն ամփոփեց տիկին Շագոյանի առաջարկը, որ առաջարկվում է, որ ռեկտորի ընտրության հետ բուհի աշխատակազմը կապ չունենա: Բայց կա մեկ այլ խնդիր՝ արհեստական սինթեզ կա երկու օրենքների, բուհականի եւ հիմնադրամների, որոնք մի կերպ կցվել են իրար, եւ ՀԽ-ն փորձում է ինչ-որ ճանապարհ գտնել: Եթե կա նախագիծը, կա 2 պատգամավոր, կա մեկ փոխնախարար, այս ամբողջը կարելի է գրել, առաջարկներ ներկայացնել: Տիկին Շագոյանը նշեց, որ կարելի է հարցը բարձրացնել նաեւ նախարարի հետ հանդիպման ընթացքում: Խնդիրն իրականում միայն ՇՊՀ-ինը չէ: ԵՊՀ-ն եւս ունեցել է նույն ցնցումերը ու քանի որ ՇՊՀ-ն առաջինը բախվեց այս թեմային, ու, շնորհակալություն հայտնելով Լ. Բարսեղյանին, շատ բաց արել է ամեն ինչ, փորձելով լուծելով խնդիրները, բայց 9 ձայնը, որը միշտ ստանում է դասախոսը բուհի ներսում, իր համար նշանակում է, որ կա շահերի բախում:

Բուհից ընտրված ՀԽ անդամները չհամաձայնեցին Գ.Շագոյանի հետ:

Կ.Ավագյանը նշեց, որ ՀԽ-ին մեղադրում են, որ ռեկտոր չընտրվեց, ու մեղադրում են աշխատակիցները, այն դեպքում, երբ ամենամեծ շահագրգռվածությունը հարցն արագ փակելու ու նոր ռեկտոր ունենալու ունեն հենց դրսից նշանակված հոգաբարձուները: Փորձեց հիմնավորել, որ ամենաշատ ձայն հավաքած երկու թեկնածուներն էլ ՇՊՀ-ից են եղել: Ու հավաքել են նույն ձայները: Եթե մեղադրվում են դրսից նշանակված հոգաբարձուները, առաջարկում է մտածել, թե ինչպես են կառավարվելու ռիսկերը, եթե ներսում երկու թիմ չեն կարող իրար հետ պայմանավորվել մեկ հարցում, փոխզիջման ինչ-որ տարբերակներ գտնել:
Չէ՞ որ կարող են անընդհատ նույն մարդիկ առաջադրվել եւ անընդհատ չկայանա ընտրությունը:

Եվս մեկ նկատառում Գ.Շագոյանի բարձրացրած հարցի կապակցությամբ: Հանրակրթության մեջ նոր կարգով բարձրացվում է դպրոցի դերը, եւ կառավարման խորհրդում դպրոցի ձայների քանակը ավելացվում է, դարձնելով հարաբերակցությունը 5-4, բայց սահմանափակելով քվեարկելու ազատությունը իենց ներկայացրած մարմնի՝ ծնողական կամ մանկավարժական խորհրդի որոշումների սահմանում քվեարկելու պահանջով: Իսկ բուհական նոր օրենքի առաջարկներում դեպքում բուհի ներքին շահառուների իրավունքները նվազեցնում են: Տիկին Շագոյանը ճշտեց, որ բուհի դեպքում կառավարման խորհուրդը նույն լիազորություններով է մնում ըստ նոր օրենքի, բայց հակասության մեջ է մտնում Հիմնադրամների մասին օրենքի հետ, քանի որ բուհի կառավարման մարմինների անդամները չեն կարող ներկայանալ ՀԽ, հետագայում կառավարման խորհրդում:

Սերոբյանն ուղղեց, որ ՇՊՀ մարմիններն են ՀԽ, Կառավարիչը, ռեկտորատը, գիտական խորհուրդը: Գ.Շագոյանը նշեց,որ մարմինների նման ձեւակերպումը շատ անհասկանալի է եւ կամայական կարող է դիտվել:

Ա. Խաչատրյանը խնդրեց կանոնադրական փոփոխությունների առաջարկներ եւս ներկայացնել:

Գ. Բարսեղյանը ՀԽ անձնակազմի մեջ դասախոսների դերի բարձրացում կարեւորեց, նաեւ Գյումրիից լինելը:

Լ. Բարսեղյանը խնդրեց հիշել ինչպես էր առաջ, երբ չկային դրսի ու ներսի դասախոսների քննարկումներ, կային 13 րոպեանոց նիստեր, անկախ մասնակցությունից: Խնդրեց առաջարկները ներկայացնել գրավոր:

Այնուհետեւ նիստն հայտարարեց փակված:

Անուն Ազգանուն

Կարեն Սարուխանյան՝ _____

Սուրեն Մանուկյան _____

Սեյրան Մարտիրոսյան _____

Գայանե Շագոյան _____

Աիդա Գարեգինյան _____

Նաշիկ Հարությունյան _____

Էվելինա Մաթեւոսյան _____

Գրիգոր Բարսեղյան _____

Արտուշ Խաչատրյան _____

Խաչատուր Իսրայելյան _____

Օվսաննա Թերզիբաշյան _____

Ռիմա Խաչատրյան _____

Մառա Հարությունյան _____

Անուշավան Սարգսյան _____

Ռիմա Պողոսյան _____

Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Լեւոն Բարսեղյան _____

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար

Կարեն Ավագյան _____